ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/296

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2021թ. թիվ 26/26-1/17603-2021 գրությամբ «Օպտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 15.10.2021թ. թիվ 09/2700 գրության հիման վրա, 27.10.2021թ. թիվ 26/26-1/17603-2021 գրությամբ նախաձեռնել է «Օպտշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Օպտշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Օպտշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Օպտշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/296 ընթացակարգի շրջանակներում 02.11.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.10.2021թ. թիվ 09/2700 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի ապրիլի 26-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է տնտեսական և կենցաղային ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը՝ թվով 3 հատ փոշեկուլ (Elitech ՊՊԱ-18CL, Elitech LLC):

Ըստ պայմանագրի մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 26-ին: Բազմաթիվ անգամ բանավոր տեղեկացնելուց զատ, սույն թվականի հուլիսի 15-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ընկերությանը տրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, ինչի մասին Ընկերությունը պատշաճ ծանուցվել է: Սակայն Ընկերությունը կրկին չի իրականացրել մատակարարումը և բանավոր տեղեկացրել է ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին:

Հիմք ընդունելով ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ Համալսարանը լուծել է Ընկերության հետ կնքված վերոհիշյալ պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ սույն թվականի հոկտեմբերի 14-ին Համալսարանը չմատակարարված ապրանքի մասով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել է նաև Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստին:

Քանի որ թիվ ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 պայմանագիրը լուծվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտման հիմքով, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Ձեզ ենք տրամադրում տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ հիմքերը՝ թիվ ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 պայմանագիրը և պայմանագիրը լուծելու մասին Համալսարանի ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/296 ընթացակարգի շրջանակներում 02.11.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/296 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/296 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» ծածկագրով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար տնտեսական և կենցաղային ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր:

3. «Օպտշին» ՍՊԸ-ն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ուղղված 07.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր:

Նշված պայմանագրով Ձ. 28 փոշեկուլ 3 հատ, նախատեսել էինք ներմուծել Ռուսաստանի դաշնությունից: Սակայն, Ռուսաստանի դաշնության գործընկերը, մեզ հետ ունեցած պայմանավորվածությունները խախտել է և ապրանքը ժամանակին չի ուղարկել, չնայած նրան, որ մենք մեր կողմից ստանձնած պարտավորությունները կատարել ենք:

Գործընկերը խոստացել է կարճ ժամանակում կատարել առաքում:

Ուստի խնդրում եմ Ձեզ վերոնշյալ պայմանագիրը միակողմանի չլուծարել և հնարավորություն տալ նշված ապրանքները մատակարարել սեղմ ժամկետում»:

4. Այնուհետև «Օպտշին» ՍՊԸ-ն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ուղղված 14.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր:

Նշված պայմանագրով Ձ. 28 փոշեկուլ 3 հատ, նախատեսել էինք ներմուծել Ռուսաստանի դաշնությունից: Սակայն, Ռուսաստանի դաշնության գործընկերը, մեզ հետ ունեցած պայմանավորվածությունները խախտել է և ապրանքը ժամանակին չի ուղարկել, չնայած նրան, որ մենք մեր կողմից ստանձնած պարտավորությունները կատարել ենք:

Գործընկերը խոստացել է կարճ ժամանակում կատարել առաքում:

Ուստի խնդրում եմ Ձեզ վերոնշյալ պայմանագիրը միակողմանի չլուծարել և հնարավորություն տալ նշված ապրանքները մատակարարել մինչև 30 սեպտեմբերի 2021թ.»:

5. Գնման հայտը նախագծած ստորաբաժանման ղեկավար Ա. Աղայանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Ա. Մուրադյանին ուղղված 04.10.2021թ. զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ԵՊԲՀ հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման և գնման պայմանագիր: Պայմանագրով նշված ապրանքատեսակի (Ձեռքի փոշեկուլ- 3 հատ) մատակարարման ժամկետները Վաճառողը չի պահպանել: Լրացել է նաև Վաճառողի կողմից ուղարկված դիմում-բացատրագրում նշված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը՝ /ս.թ. 30.09.2021թ/:

Ելնելով վերոնշվածից՝ խնդրում եմ Ձեր թույլտվությունը համապատասխան ստորաբաժանմանը «Օպտշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը /հրավերով նախատեսված 28-րդ չափաբաժնի մասով/ լուծելու համար»:

6. Պատվիրատուն «Օպտշին» ՍՊԸ-ին ուղղված 14.10.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2021թ. ապրիլի 26-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) և «Օպտշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված տնտեսական և կենցաղային ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը պարտավորվել է մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը՝ թվով 3 հատ փոշեկուլ (Elitech ПРА 18CL, Elitech LLC):

Ըստ պայմանագրի մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 26-ին: Բազմաթիվ անգամ բանավոր տեղեկացնելուց զատ սույն թվականի հուլիսի 15-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեզ տրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է: Սակայն Ձեր կողմից մատակարարումը կրկին չի իրականացվել և բանավոր տեղեկացրել եք ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 26.04.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագիրը:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 14.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.10.2021թ. թիվ 26/26-1/17603-2021 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 15.10.2021թ. թիվ 09/2700 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» ծածկագրով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար տնտեսական և կենցաղային ապրանքների մատակարարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր:

«Օպտշին» ՍՊԸ-ն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ուղղված 07.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր:

Նշված պայմանագրով Չ. 28 փոշեկուլ 3 հատ, նախատեսել էինք ներմուծել Ռուսաստանի դաշնությունից: Սակայն, Ռուսաստանի դաշնության գործընկերը, մեզ հետ ունեցած պայմանավորվածությունները խախտել է և ապրանքը ժամանակին չի ուղարկել, չնայած նրան, որ մենք մեր կողմից ստանձնած պարտավորությունները կատարել ենք:

Գործընկերը խոստացել է կարճ ժամանակում կատարել առաքում:

Ուստի խնդրում եմ Ձեզ վերոնշյալ պայմանագիրը միակողմանի չլուծարել և հնարավորություն տալ նշված ապրանքները մատակարարել սեղմ ժամկետում»:

Այնուհետև «Օպտշին» ՍՊԸ-ն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ուղղված 14.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր:

Նշված պայմանագրով Չ. 28 փոշեկուլ 3 հատ, նախատեսել էինք ներմուծել Ռուսաստանի դաշնությունից: Սակայն, Ռուսաստանի դաշնության գործընկերը, մեզ հետ ունեցած պայմանավորվածությունները խախտել է և ապրանքը ժամանակին չի ուղարկել, չնայած նրան, որ մենք մեր կողմից ստանձնած պարտավորությունները կատարել ենք:

Գործընկերը խոստացել է կարճ ժամանակում կատարել առաքում:

Ուստի խնդրում եմ Ձեզ վերոնշյալ պայմանագիրը միակողմանի չլուծարել և հնարավորություն տալ նշված ապրանքները մատակարարել մինչև 30 սեպտեմբերի 2021թ.»:

Գնման հայտը նախագծած ստորաբաժանման ղեկավար Ա. Աղայանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Ա. Մուրադյանին ուղղված 04.10.2021թ. զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ԵՊԲՀ հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման և գնման պայմանագիր: Պայմանագրով նշված ապրանքատեսակի (Ձեռքի փոշեկուլ- 3 հատ) մատակարարման ժամկետները Վաճառողը չի պահպանել: Լրացել է նաև Վաճառողի կողմից ուղարկված դիմում-բացատրագրում նշված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը՝ /ս.թ. 30.09.2021թ/:

Ելնելով վերոնշվածից՝ խնդրում եմ Ձեր թույլտվությունը համապատասխան ստորաբաժանմանը «Օպտշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը /հրավերով նախատեսված 28-րդ չափաբաժնի մասով/ լուծելու համար»:

Պատվիրատուն «Օպտշին» ՍՊԸ-ին ուղղված 14.10.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2021թ. ապրիլի 26-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) և «Օպտշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված տնտեսական և կենցաղային ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը պարտավորվել է մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը՝ թվով 3 հատ փոշեկուլ (Elitech ПРА 18CL, Elitech LLC):

Ըստ պայմանագրի մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 26-ին: Բազմաթիվ անգամ բանավոր տեղեկացնելուց զատ սույն թվականի հուլիսի 15-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեզ տրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է: Սակայն Ձեր կողմից մատակարարումը կրկին չի իրականացվել և բանավոր տեղեկացրել եք ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 26.04.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագիրը:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 14.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***10 օրից*** ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ «Օպտշին» ՍՊԸ-ն խախտել է իր և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև 26.04.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Օպտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2021թ. թիվ 26/26-1/17603-2021 գրությամբ «Օպտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Օպտշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**